Регион и мир, 2019, № 4

Նեոազատական գաղափարախոսության ուսումնասիրությունը հայաստանյան արդի իրողությունների համատեքստում

Ռուխկյան Լ. Մ.
Հայ-Ռուսական համալսարան (Հայաստան, Երևան)
levonrukhkyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ քաղաքական մշակույթ, ազատականություն, նեոազատականություն, հետխորհրդային Հայաստան, սոցիալական պետություն

Изучение неолиберальной идеологии в контексте современной армянской реальности

Рухкян Л. М.
Российско-Армянский университет (Армения, Ереван)
levonrukhkyan@gmail.com

Резюме: Следует отметить, что проблемы общественно-политической культуры Армении актуальны и сейчас. Общественно-политическая культура Армении, проходя через различные политические потоки, также прошла путем неолиберализма. Как и разные народы и нации, армянская нация также сформировала свою политическую культуру в историческом развитии, которая стала составной частью общей культуры разных времен.
Ключевые слова: политическая культура, либерализм, неолиберализм, постсоветская Армения, социальное государство

The study of neoliberal ideology in the context of the current Armenian reality

Rukhkyan L. M.
Russian-Armenian University (Yerevan, Armenia)
levonrukhkyan@gmail.com

Abstract: It should be noted that the problems of the social-political culture of Armenia are up-to-date. Passing through the various political streams, the public-political culture of Armenia has also passed through the path of neo-liberality. Like the different peoples and nations, the Armenian nation has also shaped its political culture in historical development, which has become a component of the common culture of different times.
Keywords: political culture, liberalism, neoliberalism, post-Soviet Armenia, social state

Խորհրդային Միության փլուզումից հետո ազատականության հանդեպ հետաքրքրվածությունը պայմանավորված էր մի կողմից ԽՍՀՄ տնտեսության ձախողումներով, մյուս կողմից քաղաքական այլախոհության հանդեպ անհանդուրժողականությամբ: Արդյունքը եղավ այն, որ հետխորհրդային ժամանակաշրջանում ազատականությունը սկսեց կրել անհատակենտրոն և տնտեսական բնույթ:

Հայաստանի արդի մշակույթի զարգացման հիմնախնդիրները ավելի հանգամանալից և մանրակրկիտ վերլուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադարձ կատարել մի քանի հարցադրումների: Դրանք են՝ ի՞նչպես է ձևավորվել Հայաստանի արդի քաղաքական մշակույթը, ի՞նչպիսի դրսևորումներ և բաղադրատարրեր է ունեցել Հայաստանի քաղաքական մշակույթը և ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել, արդի ժամանակաշրջանում ի՞նչպիսի քաղաքական մշակույթ է բնորոշ Հայաստանին, արդյո՞ք Հայաստանում զարգացել է մասնակցային քաղաքական մշակույթը թե՞ դեռևս հպատակային քաղաքական մշակույթի կրողն ենք, ինչպիսի՞ ազդցություն են ունեցել Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունները Հայաստանի քաղաքական մշակույթի վրա, ի՞նչ դեր ունի գլոբալիզացիան Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման և դրսևորումների վրա, արդյո՞ք Հայաստանը զարգանում է լիբերալ-ժողովրդավարական և սոցիալ-դեմոկրատական ուղիով:

Անդրադառնալով դրանցից առաջինին նշենք, որ Հայաստանի արդի քաղաքական

մշակույթը սկսեց ձևավորվել XX դարի 90-ականներից: Այն կապված է նախկին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետ, որոնք հիմք դրեցին հասարակության, պետության և անհատների միջև նոր հարաբերությունների, ժողովրդավարական սկզբունքների արմատավորման: Այս փոփոխությունները ձևավորեցին նոր մտածելակերպ, նոր քաղաքական գիտակցություն և նոր քաղաքական մշակույթ:

1988թ. սկսած Ղարաբաղյան շարժումը լուրջ քաղաքական խնդիրներ դրեց հասարակության առջև, որոնց լուծումները պահանջում էին անհրաժեշտ քաղաքական մշակույթի առկայություն: 1990թ. Հայաստանում տեղի ունեցան ԳԽ ընտրություններ, որոնք ընդունվեցին որպես նոր քաղաքական գիտակցության և քաղաքկան մշակույթի դրսևորումներ: Հայաստանի համար փաստորեն սկսվում էր պատմության զարգացման նոր ժամանակաշրջան, քաղաքական զարգացման նոր փուլ: Հայաստանը դարձավ քաղաքական գործընթացների գործուն մասնակից, սկսեց ազդել իրացվող գործընթացների և քաղաքական որոշումների կայացման վրա: Սրանք նոր քաղաքական մշակույթի առարկայական դրսևորումներն էին:

Հետագա տարիներին ձևավորվեցին քաղաքական մշակույթի ինստիտուտային բաղադրատարրերը՝ քաղաքական համակարգը, քաղաքական կուսակցությունները, քաղաքական ռեժիմը, ինչպես նաև՝ ժողովրդավարական այլ արժեքներ: Իհարկե քաղաքական մշակույթի այս բաղադրատարրերը հասարակության մեջ դեռևս ամրապնդված չէին, որովհետև դրանք գտնվում էին իրենց ձևավորման և զարգացման գործընթացում: Հայաստանում տեղի ունեցող հետագա իրադարձությունները (պատերազմական գործողությունների դադարեցում, Սահմանադրության ընդունում, խորհրդարանական և նախագահական ընտրություններ և այլն) վեր հանեցին, նախ, նոր քաղաքական մշակույթի անհրաժեշտությունը հասարակական կյանքի, քաղաքական հարաբերությունների գործընթացներում և, երկրորդ, բացահայտեցին նրա զարգացման և դրսևորման առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքական կյանքի և քաղաքական մշակույթի միավորման դրական միտումները 90-ական թթ. կեսերին սկսեցին որոշակի ձևափոխման ենթարկվել: Արտահայտվեցին քաղաքական համակարգի այնպիսի բնորոշ գծեր, որոնք հատուկ էին ավտորիտար-քաղաքական համակարգին: Այսինքն ձևավորվում են կեղծ ժողովրդավարական սկզբունքներ, ենթակայական տիպի քաղաքական մշակույթ, քաղաքական ինստիտուտների հեղինակազրկում և այլն[1]:

Այսպիսով կարող ենք ասել, նոր քաղաքական մշակույթի ձևավորումը և զարգացումը տեղի էր ունենում հակասական վայրվերումներով: Օրինակ՝ ԱԺ ընտրություններին զուգահեռ 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեն ընդունեց ՀՀ Սահմանադրությունը, որը իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, սահմանեց քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Սահմանադրության ընդունումը կարևոր քայլ էր նոր ժողովրդական դեմոկրատական քաղաքական մշակույթի կայացման գործում: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ չնայած Սահմանադրությամբ ամրագրված էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, նախագահին տրվեց բավականին լայն լիազորություններ: Ինչն էլ պատճառ հանդիսացավ քաղաքական համակարգի հետընթաց զարգացման համար: Այսինքն՝ մի կողմից ստեղծվում էին դեմոկրատական քաղաքական մշակույթի զարգացման համար բոլոր նախադրյալները մյուս կողմից էլ դրան հակասող դրույթներ:

Այսօր հասարակական գործընթացներն այնպես են ընթանում, որ հասարակությունն, իր հերթին, խորապես չի գիտակցում ՀՀ իշխանությունների կողմից որդեգրված բարեփոխումների կուրսը, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների կարևորությունը, որը միտված է մասնակցային քաղաքական մշակույթի ձևավորմանը: Կարևոր է արձանագրել նաև այն, որ տարբեր բնագավառներում իրագործվող ուղղափոխումները Հայաստանի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրի հիմքերն են, որոնց սոցիալ-տնտեսական արդյունքը նկատելի կլինի մոտ ապագայում: Այդպիսով՝ հանուն Հայաստանի ապա-

[1] Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006թ., էջ 462-463:

գայի ու համընդհանուր օգուտի անհրաժեշտ է, որ հայաստանյան քաղաքական վերնախավի ներկայացուցիչները ձերբազատվեն անհատի պաշտամունքից՝ անձնական շահը ստորադասելով հասարակական շահին և համագործակցեն միմյանց հետ ՀՀ կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծման շուրջ: Արդյունքում, հայ քաղաքական մշակույթը կենթարկվի որակական փոփոխության և անհատակենտրոն մշակույթի կրող քաղաքական վերնախավին կփոխարինի հասարակակենտրոն մշակույթի կրող քաղաքական վերնախավը: Այս պարագայում որոշում կկայացնեն ոչ թե անհատները, այլ անհատների համախումբը, որն էլ, իր հերթին, կդառնա Հայաստանի զարգացման կարևոր գրավականներից մեկը[2]: Համաձայնելով սույն կարծիքի հետ պետք է նշենք, որ Հայաստանում իսկապես առկա է անհատակենտրոն այլ ոչ թե հասարակակենտրոն քաղաքական մշակույթ և դրա շտկման համար անհրաժեշտ է փոփոխության ենթարկել ազգային մտածելակերպի որոշակի տարրեր և անհրաժեշտ է, որպեսզի քաղաքական գործիչները հասարակական շահը գերադասեն իրենց շահից:

Երբ քննարկվում է, թե համարվում է Հայաստանը/հայությունն առանձնահատուկ տեղային քաղաքակրթություն, կարևոր է այն համատեքստը, որի շրջանակներում մենք դիտարկում ենք հարցը: Եթե պատմությունը դիտարկում ենք որպես քաղաքակրթությունների մրցակցություն և երկխոսություն, ապա պատմական համատեքստից դուրս են մնում այն ազգերը, որոնք կորցնում են պատմամշակութային ինքնորոշման ունակությունը: Այդ ունակության կորստով մենք դուրս ենք մնում պատմության ընթացքից, վերածվում ուրիշ քաղաքակրթությունների թափոնների, գուցե՝ ինչ-որ առումով օգտագործելի, բայց մեծ մասամբ՝ անպիտան: Պետականության ձեռքբերմամբ Հայաստանը վերադարձավ պատմություն՝ քաղաքակրթության մասին հին պատկերացումների համատեքստում: Պատմությունը որպես քաղաքակրթությունների մրցակցություն և երկխոսություն որակելու մեր մեկնությամբ մենք առայժմ գոյություն չունենք որպես քաղաքակրթություն: Մենք ներկայացուցիչն ենք ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած եզակի քաղաքակրթության, բայց այսօր ամենևին էլ քաղաքակիրթ ազգ չենք: Սարգսյանը քննարկում է նաև գլոբալիզացիայի ազդեցության խնդիրը մեր մշակույթի վրա :Նա նշում էր, որ մենք գտնվում ենք ոչ միայն արևմտյան, այլև արևելյան արժեքների ազդեցության ներքո: Այս առումով չափազանց կարևորվում է այն հարցը, թե արդյոք մենք կարող ենք չինտեգրվել խոշոր քաղաքակրթություններին, այլ վարել քաղաքակրթությունների երկխոսություն: Մեր կարծիքով՝ ոչ թե կարող ենք, այլ ուրիշ ընտրություն չունենք, եթե ուզում ենք պահպանել մեր ինքնօրինակությունը[3]:

Այսպիսով վերոգրյալից հետևում է, որ հայ ժողովրդի քաղաքաքակրթական հիմնահարցերը ենթարկվել են բազմակողմանի ուսումնասիրության: Յուրաքանչյուրը հետազոտություն ունի իր որոշակի առանձնահատուկ մոտեցումը Հայաստանի քաղաքակրթության նկատմամբ: Որոշ մտածողների կարծիքով այն առանձին քաղաքակրթություն է, որն ունի իր առանձնահատուկ մշակույթը, որոշների կարծիքով էլ այն արևելյան և արևմտյան քաղաքակրթություններին է ձուլված: Ըստ իս հայ ժողովուրդը չնայած իր վրա կրում է Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունների ազդեցությունը և հասարակության մեջ արմատավորվել են դրանց քաղաքական մշակույթին բնորոշ տարրեր, այնուամենայնիվ ըստ իս Հայաստանը չի կորցրել իր ազգայինը և չի ենթարկվել ձուլման, այլ վերցնելով որոշակի արժեքներ փորձել է տեղայնացնել իր մշակույթում, թե որքանո՞վ է այն ստացվել, դա արդեն հարցի մյուս կողմն է:

Անդրադառնալով գլոբալիզացիայի հարցին՝ ընդգծենք, որ գլոբալիզացիան մեծ ազդեցություն գործելով Հայաստանի վրա նպաստում է վերջինիս ներգրավվմանը մի շարք միջազգային կազմակերպությունների, ինչն էլ իր հետքն է թողնում երկրի քաղաքական մշակույթի, տնտեսության և մի շարք այլ ոլորտների վրա: Ըստ իս գլոբալիզացիան երկրի վրա ունենում է թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություն: Դրական առումով կարող ենք առանձնացնել գլոբալիզացիայի ունեցած

[2]Վահրամ Մկրտչյան, ԱԺ պատգամավոր, Նոր քաղաքական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը. Անհատակենտրոնությունից հասարակակենտրոնություն հոդված:

[3] Տ. Սարգսյան «Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ», «21-րդ դար» թիվ 2(12), 2006թ.:

դրական ազդեցությունը տնտեսության և քաղաքական մշակույթի վրա: Տնտեսական առումով Հայաստանը ներգրավվելով միջազգային տնտեսական կազմակերպությունների մեջ, ձեռք է բերում իր տնտեսությունը զարգացնելու մի շարք ուղիներ և հնարավորություններ: Քաղաքական մշակույթի տեսանկյունից ինչպես արդեն նշեցինք գլոբալիզացիան նպաստում է այնպիսի Արևմտյան արժեքների ընդօրինակմանը, ինչպիսիք են տոլեռանդությունը և այլ ժողովրդական արժեքները (անձի հավասարության,ազատության...), վերջիններըս մեծ նշանակություն ունեն պետության՝ հասարակության շահերից բխող կառավարումն իրականացնելու, քաղաքացիական գիտակցության բարձրացման համար, որը կնպաստի ավելի քաղաքականապես հասուն հասարակություն ստեղծելուն, ինչն էլ հանդիսանում է կայուն պետական ապարատի ստեղծման ուղիներից մեկը:

Գլոբալիզացիան երկրների վրա ազդում է ինչպես դրականորեն այնպես էլ բացասականորեն: Ներկայումս Հայաստան են ներգործել այնպիսի մշակութային տարրեր, որոնք նախկինում խորթ են եղել հայ ազգի ինքնությանը և ներկայում աստիճանաբար պատճառ են հանդիսանում հայ ազգին բնորոշ ավանդական մշակույթի օտարացմանը:

Այսպիսով, մեր ազգի առաջ ծառացել է ոչ միայն քաղաքակրթությունների բախման ժամանակ սեփական տեղը գտնելու հիմնահարցը, այլև համատարած գլոբալիզացիայի/ վեստերնիզացիայի պայմաններում սեփական ինքնությունը պահպանելու խնդիրը, քանի որ, լինելով քրիստոնյա և արևմտյան արժեքների կրող, հայերը կանգնում են ձուլման վտանգի առջև: Հայաստանը ևս պետք է ընտրողական վերաբերմունք ցուցաբերի թե՝ Արևմուտքի և թե՝ Արևելքի արժեքների հանդեպ:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարող ենք ասել, որ Հայաստանյան արդի քաղաքական մշակույթը ներկայումս գտնվում է զարգացման և կատարելագործման փուլում: Այն ներկայումս ևս գտնվելով Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունների խաչմերուկում փորձում է վարել երկու քաղաքակրթությունների երկխոսություն և նրանցից ընդօրինակել միայն այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում միմյանց և համապատասխանում են իր ժողովրդի ազգային խառնվածքին: Այսինքն՝ Հայաստանի արդի հիմնախնդիրներից է գտնել այն հիմնական ուղիները, որոնք կնպաստեն մշակութային խառնաշփոթության կանխմանը, քաղաքական նոր և ավելի հասարակակենտրոն մշակույթի ստեղծմանը, գլոբալիզացիայի պայմաններում ազգայինը (մշակույթ, արվեստ, ավանդույթներ և այլն) պահպանելուն և միևնույն ժամանակ վերազգային մակարդակում մյուս երկրներից հետ չմնալուն:

Արդեն հետխորհրդային Հայաստանը բնութագրվում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման տարրերայնությամբ, ինչը մեծամասամբ կրում էր հատվածային բնույթ: Հայտնի գրեթե բոլոր գաղափարախոսությունների՝ ազատական, երբեմն անգամ համընդանուր բարեկեցության, ինչպես նաև՝ նեոազատական ու խորհրդային շրջանից ժառանգություն ստացած ու դեռևս կենսունակությունը պահպանող պատեռնալիստական բնույթի մոտեցումների նորովի գոյության, իսկ ավելի կոնկրետ մեկնաբանման պայմաններում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը դեռ ավարտված չէ: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ 90-ական թվականներից սկսած Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև ներկա համակարգի ամբողջական ձևավորման և կայացման հնարավորությունների բացահայտումն արդի հասարակական-քաղաքական նեոլիբերալ իրողությունների պայմաններում համարվում է արդիական: Նեոազատականության և սոցիալական պաշտպանության փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն ազատականության, որին բնութագրական է սոցիալական ապահովության, համընդհանուր պետական տրանսֆերտների, ինչպես նաև կարիքավորության գնահատման ընթացակարգի վրա հիմնված կենսաթոշակների ցածր մակարդակը և որի դեպքում եկամտի պահպանման սոցիալական ծրագրերը մեծ մասամբ ուղղված են դեպի ամենաաղքատները, նեոազատականության դեպքում արվում է հնարավոր ամեն բան կենսաթոշակների մակարդակն արդի կենսապայմաններին համապատասխանեցնելու

ուղղությամբ, իսկ սոցիալական աջակցության ծրագրերից օգտվում են նաև հասարակության այլ խավեր: Կարծում ենք Հայաստանում, ի վերջո, հնարավոր կլինի հասնել հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծման, լրիվ զբաղվածություն և եկամուտների համահարթեցման բոլորի համար:

Հայաստանի երրորդ Հանրապետությունը ծնունդ առավ և պատմական դժվարին ուղին սկսեց 20-21-րդ դարերի սահմանագծին: Այս փուլը լիարժեք հիմնավորմամբ կարելի է անվանել սոցիալ-իրավական պետության էվոլյուցիայի նեոազատական փուլ: Այս փուլում գործ ունենք նրա նոր՝ նեոազատական մոդելի հետ: Այս մոդելը հայտնվում է, երբ արևմտյան հասարակությունը շատ չափանիշներով իսկապես դառնում է պոստինդուստրիալ, գլոբալ, տեղեկատվական, պոստտնտեսական և պոստկապիտալիստական, երբ մեծանում է արտադրության ոչ նյութական գործոնների և նրանց ուղեկցող մտավոր և պատմական ռենտայի նշանակությունը, իսկ պետական-իրավական ձևն սկսում է ձեռք բերել նոր որակ և դառնալ սոցիալ-իրավական պետության նեոազատական տարատեսակ:

Նեոազատականությունը ՀՀ-ում դրսևորվում է պոլիարխիայի և տրիպարտիզմի ձևով: Պոլիարխիան ժամանակակից հասարակության շրջանում կառավարման յուրօրինակ դրսևորում է, որը այլ քաղաքական կարգերից տարբերվում է երկու հիմնական բնութագրիչներով՝ ընդդիմության հանդեպ բարձր հանդուրժողականությամբ և կառավարության վարքագծի վրա ազդելու լայն հնարավորություններով՝ ներառյալ պաշտոնատար անձանց պաշտոնանկ անելը խաղաղ միջոցներով[4]:

Հայաստանյան արդի իրողությունները ևս միտում ունեն հասնել պոլիարխիայի համընդհանուր «տիրապետությանը»: Պոլիարխիայի հաստատման ակտիվ ընթացքը սկսվեց «Թավշյա հեղափոխությամբ», ինչը հայաստանյան իրողությունների արդի փուլում, միանշանակ չի ընդունվում: Պոլիարխիայի հիմնադրույթների հաստատումը վերածվում է «միֆի», երբ առաջ է գալիս տեղի ունեցածը հեղափոխություն, թե իշխանափոխություն որակելու հարցը:

«Հեղափոխություն» հասկացությունը ծագել է ուշ շրջանի լատիներեն revolutio բառից և նշանակում է շրջադարձ, խոր, արմատական-որակական փոփոխություն, ինչը ենթադրում է հասարակության թռիչքաձև զարգացում՝ նախորդ կենսապայմանների հետ համեմատած[5]: Անհրաժեշտություն ենք համարում ընդգծել, որ նախկինում տեղի ունեցած հեղափոխությունների մեծ մասին ներհատուկ է բիրտ վարվելաձևը, արյունահեղությունները և բռնությունները:

«Հեղափոխությու՞ն, թե՞ իշխանափոխություն» հարցադրման առաջացումը միանգամայն արդարացված է, քանի որ՝

- հեղափոխության «թավշյա» կամ ոչ բռնի լինելը հակասում է հեղափոխության վերաբերյալ գործող գրեթե բոլոր տեսություններին և հասարակության լայն շերտերի պատկերացումներին[6],
- իշխանափոխությունը որպես քաղաքական գործընթաց ենթադրում է իշխանությունը «անցնցում» հանձնելու գործընթաց՝ որպես լայնախոհության և պետականամետության դրսևորում, իսկ հեղափոխությունը ենթադրում է մարդու իրավունքների ոտնահարման, օրենքը ըստ նպատակահարմարության գործադրման, անարդարությունների, կամայականությունների, կոռուպցիոն սխեմաների վերացման նպատակով սկսված գործընթաց:

Մեր երկրում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը» պետք է միտվի պոլիարխիայի երկրներին բնութագրական հետևյալ գծերի հաստատմանը՝

- կենսամակարդակի ցուցանիշների համեմատաբար բարձր նշանակությունը և երկարատև ժամանակահատվածում այս ցուցանիշների աճը,
- գրագիտության լայն տարածումը,
- մասնագիտական գործունեության ոլորտների բազմաքանակությունը,
- արտադրության բնագավառում ձեռնարկությունների ինքնավարությունը, որոնք հստակորեն կենտրոնացած են ազգային և միջազգային շուկաներում:

[4] Democracy in developing Countries: Asia. (Ed. by L Diamond et all).-London, 1987. Democratization, Ch. 8-14.

[5] Политология: учеб. пособие / Под ред. А. С. Тургаева, А. Е. Хренова. - СПб.: Питер, 2005., с. 164.

[6] Доган М., Пеласси Д. Сравнительная политическая социология. How to Compare Nations.М., 1994. – С.134-147.

Այս գծերը խոչընդոտում են իշխանության կենտրոնացմանը մեկ խմբի ձեռքում:

Ելակետ ընդունելով Ռ. Դալի մշակած պոլիարխիայի տեսությունը[7]՝ ըստ այդմ էլ գընտնում ենք, որ գործառնության մեջ պետք է դրվեն երկու չափանիշ՝

• ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրում և լիդերի կայացում,

• ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված բնակչության լայն զանգվածների մասնակցություն քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

Տեղի ունեցած իրադարձությունից հետո ժողովրդավարական ընտրություններ կայացան, սակայն չենք կարող ասել, թե արդյունքը մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրումը և լիդերի կայացումն էր: «Մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրում և լիդերի կայացում» ասելով նկատի ենք ունենում, որ նոր հավաքագրված վերնախավն ոչ միայն պատասխանատվություն կկրի իր իրականացրած քաղաքականության համար, այլև պատրաստ կլինի երկրորդ սերնդի «նոր ժողովրդավար» բարեփոխիչ լիդերի հաղթանակն ապահովել ընտրություններում: Միայն այս «եթե»-ները նկատի առնելով ՀՀ-ում ժողովրդավարական ընտրությունների միջոցով հավաքագրված վերնախավի և առաջնորդի կողմից նոր սերնդի բարեփոխումները կիրականացվեն՝ զուգամիտելով ազգային և հանրային շահերը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ այս գործընթացը ենթադրում է նաև քաղաքականապես չեզոք բյուրոկրատիայի սկզբունքի առկայություն, որը ՀՀ-ում նպատակահարմար է իրականացնել ժողովրդավարացվող քաղաքական համակարգի հետևյալ գործառույթներով.

• վարչական ապարատի վերապատրաստում և նորարարական գիտելիքների յուրացում,

• կառավարման ապարատի իրավունքներն ու պարտականությունները կարգավորող կանոնների և ընթացակարգի մանրամասն մշակված օրենսդրական համակարգի ստեղծում,

• ապակենտրոնացման միջոցով ինքնակառավարման ինստիտուտների արդյունավետության ապահովում՝ համայնքների, անհատների և կազմակերպությունների մակարդակով,

• տարաբնույթ արժեշահային համակարգ ունեցող սոցիալական խմբերի միջև հասարակական-քաղաքական երկխոսության և համագործակցության մշակույթի հաստատում,

• քաղաքական վերնախավի, լիդերության և բյուրոկրատիայի ինստիտուտների գործառույթների հստակեցման նկատառումներով օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխումների իրականացում:

Վերջիններս էլ հնարավորություն կտան ոչ միայն բյուրոկրատիային «ազատագրել» քաղաքական վերահսկողությունից, այլև քաղաքական համակարգը ձերբազատել ոչ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում հավաքագրված կառավարող խավից՝ բարձրացնելով ՀՀ քաղաքացիների քաղաքական գիտակցությունը: Ելակետ ունենալով ՀՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունների փորձը կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում անհատի գիտակցությունը կողմնորոշված է դեպի մարգինալ ավանդական արժեքները: Թեև անհատը մասնակցում է քաղաքական կյանքին, սակայն այդ մասնակցությունը չի համարվում նրա կողմից քաղաքական նպատակի ակտիվ ընտրության հետևանք և, ըստ էության, ներկայանում է որպես քաղաքականից դուրս գործունեություն՝ թելադրված վախի, շահի և այլ գործոններով:

Այսպես, Հայաստանը սոցիալ-իրավական պետություն է: Սոցիալ-իրավական պետության արդի նեոազատական մոդելը արդյունք է համաշխարհայնացման գործընթացի: Այժմ իրականացվող համաշխարհայնացման նեոազատական նախագծի նպատակն է արևմտյան հասարակության դասակարգային կոնֆլիկտները վերագրել զարգացող երկրների հետ հարաբերությունների վրա, ինչի արդյունքում հնարավոր կլինի հաստատել նոր համաշխարհային կարգ մատչելի և հասանելի ռեսուրսների օգտագործման միջոցով: Ասվածը ենթադրում է, որ սոցիալ-իրավական պետությունը այսօրինակ գործողություններով մի կողմից կյանքի է կոչում իր իրավական սկզբունքը՝ միաժամանակ հասնելով որոշակի տնտեսականի իրադրության գոյության: Մյուս կող-

[7] Даль, Р. А. Демократия и ее критики / Р. А. Даль. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003., с. 78.

մից նոր դարաշրջանի հետինդուստրիալ լինելու հանգամանքը, գիտելիքահենք տնտեսության գոյությունը, մարդկային կապիտալի կարևորության գիտակցումը նպաստում է հակառակ՝ սոցիալական բևեռի աշխուժացմանը: Վերջինս նշանակում է, որ պետությունը չի կարող ամբողջովին վերածվել բիզնես-սուբյեկտի, քանի որ պետք է ֆինանսավորի ոչ մի եկամուտ չբերող սոցիալական ծրագրեր: Սոցիալ-իրավական պետության և նրա կողմից իր իրավական սկզբի իրացման համար համաշխարհայնացման ևս մեկ հետևանք է ազգային, սոցիալականացված փուլում, տարածաշրջան-պետության, ինչպես օրինակ՝ ԵՄ-ն, վերածվելու նրա միտումը:

Նեոազատականության հետ սերտորեն առնչվող հաջորդ երեք ասպեկտները, որոնք անհրաժեշտություն ենք համարում դիտարկել տրամաբանական կապի առկայության պայմանով, աղքատությունը, կոռուպցիան և սոցիալական պաշտպանության համակարգերն են և այն մեխանիզմները, որոնց գոյությունը կապահովի հասարակության ադապտացված գործառնումը վերը բերված փոխկապակցված հասկացությունների ճիշտ ընկալման և փոխգործակցման պայմանով:

Արդյունավետ կառավարման սկզբունքների ներդրումը թույլ կտա զարգացնել հասարակական-քաղաքական երկխոսությունը՝ նվազեցնելով աղքատությունն ու կոռուպցիան: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կանխել աղքատության վերարտադրումը նվազեցնելով՝ հասարակության բևեռացման աճը: Բարձրացնել հանրային իրազեկութան մակարդակը, հրապարակայնացնել պետական ծառայողներին բաց գործընթացով պատասխանատվության ենթարկելը, որը թուլ կտա կրճատել կոռուպցիայի մակարդակը, ինչպես նաև՝ չեզոքացնել տնտեսական հեռանկարային զարգացման տեմպերին խոչընդոտելու վտանգ առաջացնող երևույթները:

Հաջորդ կարևորագույն համատեքստը, որին առնչվում է նեոազատականությունը, կրթությունն է: Մինչև 1996թ. Հանրակրթության ոլորտի բարեփոխումները Հայաստանում կրում էին տարերային բնույթ: 1996թ.-ից սկսվեց բարեփոխումների պլանավորման և իրականացման ընթացքը: Համակարգային փոփոխությունների առաջին փուլը առնչվում էր կառավարմանը և ֆինանսավորմանը: Կառավարման տեսանկյունից արմատական քայլ էր դպրոցների կառավարումը նորաստեղծ տարածքային կառավարման մարմիններին՝ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հանձնելը: Դրան հաջորդեց անցումը խորհուրդների միջոցով դպրոցների կառավարմանը: Վերջինիս համաձայն, դպրոցի տնօրենը ոչ թե նշանակվում էր, այլ ընտրվում խորհրդի կողմից: Խորհուրդը պատասխանատու է նաև դպրոցի զարգացման ծրագրի, բյուջեի, հաստիքացուցակի և մի շարք այլ հարցերում որոշումներ կայացնելու գործում:

Հետաքրքրական է, որ մի շարք ուսումնասիրություններում առկա է նեոազատականություն-կրթություն-սոցիալական խնդիրներ կապը, որը դրսևորվում է երիտասարդության քաղաքական մոբիլիզացիայի ձևով, իսկ սոցիալական խնդիրները դիտարկվում են որպես տարածված պատճառներ, որոնց բախվում են երիտասարդները[8]: Դրանք հիմնականում ներառում են սոցիալական «անորոշության» դեմ պայքարի վրա՝ պետական պարտքի մեծացման, երիտասարդության շրջանում գործազրկության բարձր մակարդակի, մատչելի անշարժ գույքի բացակայության և մի շարք այլ սոցիալական խնդիրների վրա: Ժամանակակից նեոլիբերալ կապիտալիստական աշխարհակարգին դեմ կազմակերպվել են նաև մի շարք ներբուհական երիտասարդական շարժումներ Դանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Հունաստանում 2005 և 2006 թվականներին: Հիմնական պատճառ է ծառայել ուսման վարձերի աճը, որը ուսանողները կապում են համաշխարհային ճգնաժամի և սխալ ֆինանսավարկային քաղաքականության հետ: Հայաստանյան վերջին իրադարձությունները, բուհական ուսանողական անձնակազմի ակտիվ մասնակցությունը դրանց ևս վկայում են վերը բերվածի ճշմարտացիության մասին:

Կատարված ուսումնասիրություններից կարող ենք փաստել, որ Եվրոպայում երիտասարդության քաղաքական մասնակցության գործոնը աննկատ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ երիտասարդական քաղաքական

[8] Stevanson J. M., Listening to Radicals: Attitudes and Motivations of Young People Engaged in Political and Social Movements Outside of the Mainstream in Central and Nordic Europe, British Council, 2011, 32 p, Vanandurel M., Amerio A., Stafseng O. And Tap P., Young People and Associations in Europe, Council of Europe, 1996.

մոբիլիզացիան վերաճում է մասայական ցույցերի և բողոքների։ Այնուամենայնիվ, որպես կանոն նման բողոքի ակցիաները ունեն որոշակի ուղղորդված կազմակերպական կառուցվածք, երբեմն ամենօրյա քաղաքական գործընթացների մեջ ներգրավված երիտասարդների կողմից։ Եթե երիտասարդների քաղաքական սոցիալիզացիան դիտարկել ոչ թե զուտ ինստիտուցիոնալ, այլ արտաինստիտուցիոնալ տրամաբանության մեջ, ապա նկատվում է երիտասարդության մասնակցայնության և քաղաքական սոցիալականացման բարձր մակարդակ։

Ընդհանրացնելով ընդգծենք, որ նեոլիբերալ հեղափոխությունը կամ, ինչպես մեր աշխատանքի ենթատեքստից է բխում, նեոազատական համաշխարհայնացումը հասել է իր նպատակներին և դրանով իսկ սպառել գոյություն ունեցող համակարգն ու դրա կազմակերպման ձևերը։ Ժամանակի հրամայականն այն է, որ նեոլիբերալ դրույթներից զատ գործեն նաև այլ՝ հակալիբերալ ձևեր՝ հաղթահարելու համար հասարակական-քաղաքական ճգնաժամը, կարգավորելու համար ֆինանսաշուկայական հարաբերությունները։

Գրականության և աղբյուրների ցանկ

1. Մկրտչյան Վ., ԱԺ պատգամավոր, Նոր քաղաքական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը. Անհատակենտրոնությունից հասարակակենտրոնություն հոդված:
2. Սարգսյան Տ. «Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ», «21-րդ դար» թիվ 2(12), 2006թ.:
3. Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006թ., էջ 462-463:
4. Democracy in developing Countries: Asia. (Ed. by L Diamond et all).-London, 1987. Democratization, Ch. 8-14.
5. Stevanson J. M., Listening to Radicals: Attitudes and Motivations of Young People Engaged in Political and Social Movements Outside of the Mainstream in Central and Nordic Europe, British Council, 2011, 32 p,
6. Vanandurel M., Amerio A., Stafseng O. And Tap P., Young People and Associations in Europe, Council of Europe, 1996.
7. Даль, Р. А. Демократия и ее критики / Р. А. Даль. - М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003., с. 78.
8. Доган М., Пеласси Д. Сравнительная политическая социология. How to Compare Nations. М., 1994. – С.134-147.
9. Политология: учеб. пособие / Под ред. А. С. Тургаева, А. Е. Хренова. - СПб.: Питер, 2005., с. 164.